

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋԵՎ «ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ԱՌԵՎՏՐԻՆ՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅԻ, ՀԱՐԱՎԱՅԻՆ  
ԿՈՎԿԱՍԻ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
(ՀԱՅԱՍՏԱՆ)» ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

ՔԱՆԻ ՈՐ Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետեւ՝ «Կառավարություն») և Միավորած ազգերի զարգացման ծրագիրը (այսուհետեւ՝ ՄԱԶԾ) համաձայնության են եկել համագործակցելու «Աջակցություն առևտրին՝ Կենտրոնական Ասիայի, Հարավային Կովկասի և Արևմտյան ԱՊՀ երկրների համար - Հայաստան» ծրագրի իրականացման հարցում (այսուհետեւ՝ «Ծրագիր»), որն ամփոփ ներկայացված է սույն Համաձայնագրի հավելված Ա-ում: Ծրագիրն իրականացվում է ՀՀ կառավարության և ՄԱԶԾ միջև 1995թ. մարտի 8-ին կնքված «Կառավարությանը ցուցաբերած օժանդակության և նրա հետ համագործակցության մասին» համաձայնագրի շրջանակներում:

ՔԱՆԻ ՈՐ Կառավարությունը ՄԱԶԾ-ին հայտնել է համաֆինանսավորման հիմունքներով գումար հատկացնելու իր պատրաստակամության մասին (այսուհետեւ՝ «հատկացում») Ծրագրին հասանելի միջոցների ավելացման նպատակով:

ՔԱՆԻ ՈՐ ՄԱԶԾ-ն իրականացնող գործընկեր է նշանակում հատկացումից ֆինանսավորվող ծրագրերից յուրաքանչյուրի իրականացման համար (այսուհետեւ՝ «Իրականացնող գործընկեր»):

ՈՒՍՏԻԵՎ, ՄԱԶԾ-ն եւ Կառավարությունը համաձայնության են գալիս հետեւյալի շուրջ.

**Հոդված I**

1. Կառավարությունը, սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն, ՄԱԶԾ-ի տնօրինությանն է հանձնում 10,138,000 (տաս միլիոն հարյուր երեսուն ութ հազար) ՀՀ դրամի հատկացում:
2. Կառավարությունը հատկացումը մուտքագրում է ստորև նշված բանկային հաշվեհամարին Ծրագրի համաֆինանսավորման համար ՀՀ 2014թ. պետական բյուջեից գումար հատկացնելու մասին ՀՀ կառավարության որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ 20 օրվա ընթացքում:

Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ

Հաշվի անվանումը. Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիր

Հաշվեհամարը. 001-186857-050 (ՀՀ դրամ)

**COST-SHARING AGREEMENT BETWEEN THE  
GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE  
UNITED NATIONS DEVELOPMENT PROGRAMME FOR  
IMPLEMENTATION OF THE PROJECT "AID FOR TRADE  
FOR CENTRAL ASIA, SOUTH CAUCASUS AND WESTERN  
CIS (ARMENIA)"**

WHEREAS the Government of Armenia (hereinafter referred to as the "Government") and the United Nations Development Programme (hereinafter referred to as "UNDP") have agreed to co-operate in the implementation of Project "Aid for Trade for Central Asia, South Caucasus and Western CIS (Armenia)" (hereinafter referred to as "Project"), summarized in Attachment A to this Agreement. The Project is implemented within the framework of the "Standard Basic Assistance Agreement" concluded between the Government of Armenia and UNDP on 8 March, 1995

WHEREAS the Government has informed UNDP of its willingness to contribute funds (hereinafter referred to as "the contribution") to the UNDP on a cost-sharing basis to increase the resources available for the Project;

WHEREAS the UNDP shall designate implementing partner for the implementation of each project financed from the contribution (hereinafter referred to as "Implementing Partner")

NOW THEREFORE, UNDP and the Government hereby agree as follows:

**Article I**

1. The Government shall, in the manner referred to in paragraph 2 of this Article, place at the disposal of UNDP the contribution of 10,138,000 AMD (ten million one hundred thirty eight thousand drams).
2. The Government shall deposit the contribution for co-financing Project within 20 days after entering into force Governmental Decree of RA on amount appropriation from 2014 State Budget of RA in the following bank account:

HSBC Bank Armenia CJSC

Account name: United Nations Development Programme

Account number: 001-186857-050 (AMD)

3. Բոլոր ֆինանսական հաշիվները և հաշվետվությունները պետք է արտահայտվեն ԱՄՆ դոլարով:
  4. Հատկացված վճարման արժեքը որոշվում է ՄԱԿ-ի վճարման ժամանակ գործող գործառնական փոխարժեքի կիրառմամբ: Եթե մինչև ՄԱԶԾ-ի կողմից հատկացման լիակատար օգտագործումը փոփոխվում է ՄԱԿ-ի սահմանած գործառնական փոխարժեքը, այդ դեպքում դեռևս առկա միջոցների հաշվեկշռի արժեքը ճշգրտվում է համապատասխանաբար: Եթե նման դեպքերում արձանագրվում է միջոցների հաշվեկշռի արժեքի նվազում, ՄԱԶԾ-ն իրազեկում է Կառավարությանը՝ հետագա ֆինանսավորում տրամադրելու կամ չտրամադրելու մասին որոշման ակնկալիքով: Եթե նման հետագա ֆինանսավորում չի տրամադրվում, ապա սույն Համաձայնագրով նախատեսված աջակցությունը կարող է կրճատվել, կասեցվել կամ դադարեցվել ՄԱԶԾ-ի կողմից:
  5. Հատկացումից տոկոսի տեսքով ստացված գանկագած եկամուտ մուտքագրվում է ՄԱԶԾ-ի հաշվեհամարին և օգտագործվում ըստ ՄԱԶԾ հաստատված ընթացակարգերի:
3. All financial accounts and statements shall be expressed in United States dollars.
  4. The value of the contribution-payment shall be determined by applying the United Nations operational rate of exchange in effect on the date of payment. Should there be a change in the United Nations operational rate of exchange prior to the full utilization by UNDP of the contribution-payment, the value of the balance of funds still held at that time will be adjusted accordingly. If, in such a case, a loss in the value of the balance of funds is recorded, UNDP shall inform the Government with a view to determining whether any further financing could be provided by the Government. Should such further financing not be available, the assistance to be provided to the Project under this Agreement may be reduced, suspended or terminated by UNDP.
  5. Any interest income attributable to the contribution shall be credited to the UNDP Account and shall be utilized in accordance with established UNDP procedures.

### **Հոդված II**

1. Ըստ ՄԱԶԾ Գործադիր խորհրդի որոշումների եւ հրահանգների, որոնք արտացոլված են իր «Այլ աղբյուրներից ծախսերի փոխհատուցման քաղաքականության» մեջ, Հատկացումից կատարվում է ծախսերի փոխհատուցում՝ այն անուղղակի ծախսերի դիմաց, որոնք կատարվել են ՄԱԶԾ կենտրոնական եւ հայաստանյան գրասենյակների կառույցների կողմից Կառավարման ընդհանուր աջակցության (ԿԸԱ) ծառայություններ մատուցելիս: Այդ ԿԸԱ ծախսերը ծածկելու նպատակով հատկացումից գանձվում է վճար՝ 3 տոկոսի չափով: Ավելին, եթե դրանք աներկբայորեն կապված են որոշակի ծրագրի հետ, ապա իրականացման բոլոր ուղղակի ծախսերը՝ ներառյալ իրականացնող գործընկերոջ ծախսերը, արտացոլվում են ծրագրի բյուջեում՝ համապատասխան հոդվածի դիմաց, եւ համապատասխանաբար ծածկվում են ծրագրի կողմից:
2. Ծրագրի բյուջեում նախատեսված գումարների հանրագումարը, շաղկապված օժանդակ ծառայությունների հատուցման համար հաշվարկված ծախսերի հետ միասին, չպետք է գերազանցեն սույն Համաձայնագրով ծրագրին հատկացված ընդհանուր միջոցները, ինչպես նաեւ ծրագրի ծախսերը և օժանդակ ծառայությունների ծախսերը հոգալու նպատակով ֆինանսավորման այլ աղբյուրներից ծրագրի ստացած միջոցները:

### **Article II**

1. In accordance with the decisions and directives of UNDP's Executive Board reflected in its Policy on Cost Recovery from Other Resources, the Contribution shall be subject to cost recovery for indirect costs incurred by UNDP headquarters and country office structures in providing General Management Support (GMS) services. To cover these GMS costs, the contribution shall be charged a fee equal to 3%. Furthermore, as long as they are unequivocally linked to the specific project, all direct costs of implementation, including the costs of implementing partner, will be identified in the project budget against a relevant budget line and borne by the project accordingly.
2. The aggregate of the amounts budgeted for the project, together with the estimated costs of reimbursement of related support services, shall not exceed the total resources available to the project under this Agreement as well as funds which may be available to the project for project costs and for support costs under other sources of financing.

**Հոդված III**

1. Հատկացումը կառավարվում է ՄԱԶԾ-ի կողմից՝ համաձայն ՄԱԶԾ կանոնակարգերի, կանոնների եւ հրահանգների՝ կիրառելով ծրագրերի իրականացման համար նախատեսված ընդունված ընթացակարգերը:
2. Ծրագրի ծախսերը եւ կառավարումը առաջնորդվում են ՄԱԶԾ կանոնակարգերով, կանոններով եւ հրահանգներով, եւ, անհրաժեշտության դեպքում, Իրականացնող գործընկերոջ կանոնակարգերով, կանոններով եւ հրահանգներով:

**Հոդված IV**

1. ՄԱԶԾ-ի եւ Իրականացնող գործընկերոջ պարտականությունների կատարումը սույն համաձայնագրի եւ համապատասխան ծրագրային փաստաթղթի/ԱԱՊ համաձայն, կախված է հոդված 1-ի երկրորդ պարբերությամբ նշված ժամանակացույցով հատկացման ստացումից:
2. Եթե տեղի է ունեցել կամ ակնկալվում է ծախսերի կամ հանձնառությունների չնախատեսված ավելացում (անկախ արժեզրկման գործոններից, փոխարժեքի տատանումներից կամ չնախատեսված հանգամանքներից), ՄԱԶԾ-ն ժամանակին Կառավարությանն է ներկայացնում լրացուցիչ հաշվարկ, որն արտացոլում է անհրաժեշտ հավելյալ ֆինանսավորումը: Կառավարությունը պետք է առավելագույն ջանքերը գործադրի պահանջվող լրացուցիչ միջոցները հայթայթելու համար:
3. Եթե հոդված 1-ի պարբերություն 2-ում նշված հատկացման վճարումները չեն կատարվում համաձայն վճարման ժամանակացույցի կամ եթե անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսավորումը չի ստացվում Կառավարությունից կամ այլ աղբյուրներից, սույն Համաձայնագրով նախատեսված ծրագրին տրամադրվելիք օժանդակությունը կարող է կրճատվել, կասեցվել կամ դադարացվել ՄԱԶԾ-ի կողմից:

**Հոդված V**

Հատկացման գումարով ձեռքբերված սարքավորումների, նյութատեխնիկական միջոցների եւ այլ գույքի հանդեպ սեփականության իրավունքն անցնում է ՄԱԶԾ-ին: ՄԱԶԾ-ի կողմից սեփականության իրավունքի փոխանցմանը վերաբերող հարցերը վճռվում են ՄԱԶԾ համապատասխան քաղաքականությունների եւ ընթացակարգերի համաձայն:

**Հոդված VI**

Հատկացումը ենթակա է բազառապես ՄԱԶԾ ֆինանսական կանոնակարգերով, կանոններով եւ հրահանգներով նախատեսված ներքին եւ արտաքին աուդիտի ընթացակարգերին:

**Article III**

1. The contribution shall be administered by the UNDP in accordance with UNDP regulations, rules and directives, applying its normal procedures for the execution of its projects.
2. Project management and expenditures shall be governed by the regulations, rules and directives of UNDP and, where applicable, the regulations, rules and directives of the Implementing Partner.

**Article IV**

1. The implementation of the responsibilities of the UNDP and of the Implementing Partner pursuant to this Agreement and the relevant project document shall be dependent on receipt by the UNDP of the contribution in accordance with the schedule of payments set out in Article I, paragraph 2, above.
2. If unforeseen increases in expenditures or commitments are expected or realized (whether due to inflationary factors, fluctuation in exchange rates or unforeseen contingencies) UNDP shall submit to the Government on a timely basis a supplementary estimate showing the further financing that will be necessary. The Government shall use its best endeavors to obtain the additional funds required.
3. If the contribution-payments referred to in Article I, paragraph 2, above, are not received in accordance with the payment schedule, or if the additional financing required in accordance with paragraph 2, above, is not forthcoming from the Government or other sources, the assistance to be provided to the Project under this Agreement may be reduced, suspended or terminated by UNDP.

**Article V**

Ownership of equipment, supplies and other property financed from the contribution shall vest in UNDP. Matters relating to the transfer of ownership by UNDP shall be determined in accordance with the relevant policies and procedures of UNDP.

**Article VI**

The contribution shall be subject exclusively to the internal and external auditing procedures provided for in the financial regulations, rules and directives of UNDP.

**Հոդված VII**

ՄԱԶԾ-ն, Կառավարության պահանջով, տրամադրում է ֆինանսական եւ այլ հաշվետվություններ՝ պատրաստված ՄԱԶԾ հաշվետվական ընթացակարգերի համաձայն:

**Article VII**

UNDP shall provide the Government on request with financial and other reports prepared in accordance with UNDP reporting procedures.

**Հոդված VIII**

1. ՄԱԶԾ-ն ծանուցում է Կառավարությանը, երբ հատկացմանն առնչվող բոլոր աշխատանքներն ավարտվում են:
2. Չնայած հատկացմանն առնչվող բոլոր աշխատանքների ավարտին, հատկացման չօգտագործված վճարումները մնում են ՄԱԶԾ-ի տրամադրության տակ՝ մինչեւ հատկացման միջոցով ֆինանսավորված աշխատանքներն իրականացնելիս առաջացած բոլոր հանձնառությունների եւ պարտավորությունների բավարարումը եւ այդ աշխատանքների պատշաճ եզրափակումը:
3. Եթե հատկացման չօգտագործված վճարումները չեն բավականացնում վերոնշյալ հանձնառությունների եւ պարտավորությունների կատարման համար, ՄԱԶԾ-ն այդ մասին տեղեկացնում է Կառավարությանը եւ վերջինիս հետ խորհրդակցում նման հանձնառությունների եւ պարտավորությունների բավարարման եղանակի վերաբերյալ:
4. Բոլոր նման հանձնառությունների եւ պարտավորությունների բավարարումից հետո մնացած հատկացման չձախսված վճարումները տնօրինվում են ՄԱԶԾ-ի կողմից՝ խորհրդակցելով Կառավարության հետ:

**Article VIII**

1. UNDP shall notify the Government when all activities relating to the contribution have been completed.
2. Notwithstanding the completion of all activities relating to the contribution, UNDP shall continue to hold unutilized contribution-payments until all commitments and liabilities incurred in implementation of the activities financed by the contribution have been satisfied and these activities brought to an orderly conclusion.
3. If the unutilized contribution-payments prove insufficient to meet such commitments and liabilities, UNDP shall notify the Government and consult with the Government on the manner in which such commitments and liabilities may be satisfied.
4. Any contribution-payments that remain unexpended after such commitments and liabilities have been satisfied shall be disposed of by UNDP in consultation with the Government.

**Հոդված IX**

1. Երկու կողմերի միջեւ կայացած քննարկումներից հետո և պայմանով, որ հատկացման արդեն ստացված վճարումները, ծրագրի տրամադրության տակ գտնվող այլ միջոցների հետ միասին, բավարար են ծրագրի իրականացման ընթացքում ստանձնած հանձնառությունները եւ պարտավորություններն ի կատար ածելու համար, սույն Համաձայնագիրը կարող է դադարեցվել ՄԱԶԾ-ի կամ Կառավարության կողմից: Համաձայնագիրը դադարում է գործել կողմերից որեւէ մեկի՝ Համաձայնագիրը դադարեցնելու որոշման մասին մյուս կողմին գրավոր ծանուցելուց երեսուն օր հետո:
2. Եթե հատկացման չօգտագործված վճարումները, ծրագրի տրամադրության տակ գտնվող այլ միջոցների հետ միասին, չեն բավականացնում վերոնշյալ հանձնառությունների եւ պարտավորությունների կատարման համար, ՄԱԶԾ-ն տեղեկացնում է Կառավարությանը եւ վերջինիս հետ խորհրդակցում նման հանձնառությունների եւ պարտավորությունների բավարարման եղանակի վերաբերյալ:
3. Անկախ Համաձայնագրի դադարեցումից, ՄԱԶԾ-ն շարունակում է տնօրինել հատկացման չօգտագործված վճարումները մինչեւ հատկացման միջոցով ֆինանսավորված աշխատանքներն իրականացնելիս առաջացած բոլոր հանձնառությունների եւ պարտավորությունների բավարարումը եւ այդ աշխատանքների պատշաճ եզրափակումը:

**Article IX**

1. After consultations have taken place between the two Parties to this Agreement and provided that the contribution-payments already received are, together with other funds available to the Projects, sufficient to meet all commitments and liabilities incurred in the implementation of the Projects, this Agreement may be terminated by UNDP or by the Government. The Agreement shall cease to be in force thirty days after either of the Parties may have given notice in writing to the other Party of its decision to terminate the Agreement.
2. If the unutilized contribution-payments, together with other funds available to the Projects, are insufficient to meet such commitments and liabilities, UNDP shall notify the Government and consult with the Government on the manner in which such commitments and liabilities may be satisfied.
3. Notwithstanding termination of this Agreement, UNDP shall continue to hold unutilized contribution-payments until all commitments and liabilities incurred in implementation of the activities financed by the contribution have been satisfied and these activities brought to an orderly conclusion.

4. Նման հանձնառությունների եւ պարտավորությունների բավարարումից հետո մնացած հատկացման չձախսված վճարումները տնօրինվում են ՄԱԶԾ-ի կողմից՝ խորհրդակցելով Կառավարության հետ:

4. Any contribution-payments that remain unexpended after such commitments and liabilities have been satisfied shall be disposed of by UNDP in consultation with the Government.

**Հոդված X**

**Article X**

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխության ենթարկվել Կառավարության և ՄԱԶԾ-ի միջև նամակների փոխանակության միջոցով: Այս նպատակով փոխանակված ցանկացած նամակագրություն դառնում է Համաձայնագրի անքակտելի մաս:

This Agreement may be amended through an exchange of letters between the Government and UNDP. The letters exchanged to this effect shall become an integral part of the Agreement.

**Հոդված XI**

**Article XI**

Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է համարվի, հստակ կամ ակնարկվող, Միավորված ազգերի կազմակերպության, այդ թվում, ՄԱԶԾ-ի որեւէ արտոնությունից եւ անձեռնմխելիությունից հրաժարում:

Nothing in this agreement shall be deemed a waiver, express or implied, of any of the privileges and immunities of the United Nations, including UNDP.

**Հոդված XII**

**Article XII**

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է ստորագրման պահից:

This Agreement shall enter into force upon signature.

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄԸ ՈՐԻ, ներքստորագրյալները՝ օժտված համապատասխան լիազորություններով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը անգլերեն եւ հայերեն լեզուներով՝ երկու վավեր օրինակից: Անհամապատասխանության կամ անհստակության ծագման դեպքում առաջնային է համարվում անգլերեն տարբերակը:

IN WITNESS WHEREOF, the undersigned, being duly authorized thereto, have signed the present Agreement in the English and Armenian languages in two copies. If there is any inconsistency or ambiguity between the two versions, the English version shall prevail.

For the Government:  
Կառավարության կողմից՝

For the United Nations Development Programme:  
Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի կողմից՝

Name: Vahram Avanesyan

Name: Bradley Busetto  
Անունը՝ Վահրամ Ավանեսյան

Անունը՝ Բրեդլի Բուզետտո

Title: RA Minister of Economy  
UNDP Resident Representative

Title: UN Resident Coordinator

Պաշտոնը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար

Պաշտոնը՝ ՄԱԿ-ի ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ

Date:  
Ամսաթիվը՝

Date:  
Ամսաթիվը՝